

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՆԵՐԿԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ

Պ Բ Պ Տ Ո Ւ Մ Ի Փ Ո Ր Զ Ե Ր

Մ Ա Ս Ն Բ

(Շար. տե՛ս Բազմալիպ 1948, էջ 22)

ՆԵՐԿԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՇԷՆՔԵՐՈՒ
ՎՐԱՅ

Դ. - ԶՈՒԱՐԹՆՈՅ ԵԿԵՂԵՑԻ⁽¹⁶⁾.

Մեր ճարտարապետության իրերն պար-
ծանք ներկայացնում շինություններուն
միջև Զուարթնոց եկեղեցին կը զրաւէ կա-
րեւոր տեղ մը այն օրէն ի վեր, երբ Թա-
րամանեան և Տէր-Սարգիսեան փորձեցին
վերակազմել զայն, անոր աւերակներուն
մանրակրկիտ ըննութեամբը: Եւ առ այդ
պատրաստեցին յատակագիծը և «Մա-
քէթ»ը⁽¹⁷⁾:

(16) Զուարթնոց եկեղեցին բազմաթիւ մատենագիր-
ներէ յիշուած է Ս. Գրիգոր անուամբ, Այսպէս՝ Յով-
կաթ. Գրառնանակերացին իր Պատմութեան մէջ (Ե-
րուսաղէմ 1843, էջ 62) կը զրէ «Գնէ ապա հիմն մեծ
և հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ ըստ
անուանարկութեան որոյն Գրիգորի...»: Կիրակոս
Վրդ. Գանձակեցին իր Համառօտ Պատմութեան մէջ
(Երուսաղէմ, 1843, էջ 58) կ'ըսէ. «Շինեաց և զուարթ-
Գրիգոր զգարմանացոյցիչն տեսողաց»: Վարդան պատ-
միչ բարձրերկրցին կը յիշատակէ. «Նորին (Ներսէս
Գ.ի համար) հրամանաւ շինէր (Անաստաս Ա.ի անունի
հովիտիս) զԱստուծոյ Գրիգորն մինչ էր նա (Ներսէս) ի
Տաշիս»: Սէրէնան է որ կը զրէ իր «Ի Հերակի Պատ-
մութեան մէջ (ապագ. Ս. Պետրոսյանի 1879 թ. 1. Գ.)
«Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն Երկնաւոր Զուարթ-
նոցն...»:

(17) Եթէ ըննենք Զուարթնոց վերակազմութեան հա-
յար Թարամանեանի պատրաստած մաքէթը և երկրա-

ճարտարապետական ոճի տեսակէտով,
տակայն, Զուարթնոցը կը ներկայանայ
որպէս օտար երկու ոճերու խառնուրդի
մը ձևին տակ: Եւ առաջին ակնարկով
պիտի խորհինք՝ թէ եթէ հայկական ճար-
տարապետութիւնը պանծալի բան մը կը
գտնէ հոն, այդ պէտք է ըլլայ շինուածքին
հսկայ քերթիքական յաջող իրականացումը
և թերեւս ալ երկու օտարոտի ոճերու
յաջող զուգորդութիւնը զրոշմամբ հայ-
կական առհմիկ ոճի «մօթիֆ» ներսով:

Արդարեւ՝ շէնքին արտաքին կլոր տեսքը
հայկական չէ, այլ հելլեն-հռոմէական է:
Նախ քան ըրկատնէութեան երեսունը՝

չափական զծագրութիւնը և բախտաւոր յատակագիծին
հետ՝ պիտի գտնենք քանի մը տարբերութիւններ մէկէն
միւսը: Նկատելով որ հայկական հին ճարտարապետու-
թեան համաձայն Զուարթնոցն ալ շրջապատուած էր
կամարակաղ սիւնազարդ ծածկոցով մը (portique), ճիշտ
պէտք է ըլլայ երկրաչափական զծագրութեան մէջ
ներկայացուած սիւնամէջի որմերուն զոյաթիւնը, Մա-
քէթին վրայ՝ արդէն այդ որմերը բաւական կորոնցուցած
են իրենց կարկուտութիւնը աւելի մեծ բացուածքներու
տակի տալով, ինչ որ պիտի համապատասխանէ, կամա-
րակաղ՝ սիւնազարդ ծածկոցի (portique) զրոթեան:
Ասիկց գտաւ, կաթողիկէի սիւնաշարքը տանիքը վեր կը
բռնէ մարեթին մէջ՝ շրջանակող բլուզ մը, մինչ զծա-
գրութեան մէջ՝ կամարաշարքով մը, ինչ որ միեւնոյն
բանը չէ: Կարելի է երկարել շարքը այս անհամապա-
տասխանութեանց միեւնոյն շէնքին երկու ներկայացում-
ներուն միջև:



ՊԱՏ. 10. - Զուարթնոց եկեղեցի, է. դար. վերակազմութեան
մաքէթը. Թ. Թարամանեանէ:

Այս մաքէթին վրայ աւելի որոշ կ'երևի շէնքը
շրջապատող սիւնազարդ ծածկոցը (portique):

Հոսմ տուած է կլոր տաճարներ, որպիսի
են՝ Հոսմի նշանաւոր Բանթներ, Մի-
նէվի փոքրիկ տաճարը (Վեստայի տաճար),
Թիւոլին: Քրիստոնէութեան հաստատու-
մէն վերջն ալ Հոսմ շարունակեց շինել
կլոր եկեղեցիներ որպիսի են Սան Սթէ-
ֆանոյ Ռոմանոյ, Լատերանի Ս. Յով-
հաննէսը, Հռովմէանայի Ս. Քոնսթանտին
և այլն: Քրիստոնէական շրջանի այս կլոր

եկեղեցիները զործածուեցան որպէս Մկր-
տարան:

Զուարթնոցի ներքին սարքաւորումն ալ՝
խառնուած հայկական յղացում չէ: Նա-
խորդ զլիտուն մէջ⁽¹⁸⁾ արդէն խօսեցայ խա-
ռնուած եկեղեցիներու մասին, անոնց ներ-


(18) Բազմալիպ, Թիւ 1-2, Յունուար-Փետրուար 1948:

դաշնակ զիծը ներկայացուցած առնաւ : խաչածեւ եկեղեցիները՝ Սուրիա-Խրանա-կան շինուածքի ներմուծում մըն է մեր ճարտարապետութեան մէջ :

Զուարթնոցի ճարտարապետութիւնը կարծէք կը ցոլացնէ իսկապէս մեր Եւրոպայէն քաղաքական խառնակ կացութիւնը : Մէկ կողմէն Զուարթնոցը շինող Ներսէս Գ. Տաշեցի կաթողիկոսի ջերմ բնական-դասիրութիւնը, միւս կողմէ ալ Արաբական տիրապետութիւնը Հայաստանի վրայ, կու գան կ'արտայայտուին Զուարթնոցի ճարտարապետութեան մէջ, Հռոմէական և Սուրիական շինուածքներու խառնուրդ մը մէջտեղ բերելով :

Եթէ աւելի մօտէն քննենք Զուարթնոցի ոճաւորումը, պիտի տեսնենք թէ հայ ճարտարապետը ուզած է այն շէնքին վրայ իրագործել առհասարակ ճարտարապետութեան մէկ շինուածքներ :

Արդարեւ մեր հին եկեղեցիները, Տեկուր,



ՊԱՏ. 11. - Բազմալեւան մերկայացում «Ներ-դաշնակ զիծ» ուրուագիծերու, Զուարթնոցի՝ $\sqrt{2}$, հոսի Բաւթէօրի Փ, և հոսի Սամ Սիւթանոյ Ռոփեւոյի՝ Փ, կլոր յա-տակագիծով շէնքերու :

Օձուն, Երերուր և նոյն խակ աւելի վերջը շինուած Ա. Գալեանէն, ունեցած են շէնքը շրջապատող սիւնազարդ կամարակապ ծածկոց մը⁽¹⁹⁾, մնացորդ մեր հեթանոսա-կան շինուածքներին, որ խիստ կերպով ազդուած էր հելլէն-հռոմէական շինուածքներին :

Արդ Եւրոպայէն, Հայաստանի մէջ նոր ծաղկած խաչածեւ եկեղեցիներուն շուրջ եթէ ուզենք առհասարակ սիւնազարդ ծածկոց մը շինել, անվերապելիօրէն պիտի լինանք շինուածքի կլոր ձևին մէջ : Ահա ինչ որ պատահած է Զուարթնոցի ձևաւորումին համար :

Զուարթնոցը խաչածեւ եկեղեցի մըն է, որուն շուրջ, ճարտարապետը աւելցուցած է հայկական սիւնազարդ ծածկոց մը : Ուրեմն՝ Զուարթնոցի ներքին խաչածեւ մասը իր «գմբէթով»⁽²⁰⁾ պէտք է ըլլայ, բերքիօրէն անկախ շինուածք մը, շրջապատի բոլորակ շէնքէն : Այնպէս որ, շէնքին հաւասարակշռութեան տեսակէտով, կառուցումը որեւէ տկարութիւն պիտի չկրէ՝ եթէ արտաքին շրջանակը որ սիւնազարդ ծածկոցն է՝ վերցնենք : Ինչպէս եղած է՝ օրինակ Տեկուրի պարագային մէջ :

Հայ ճարտարապետին վարպետութիւնը հոն է որ յաջողած է խաչածեւ եկեղեցին սիւնազարդ ծածկոցով մը շրջապատելու իր փորձին մէջ : Եւ այս փորձին արդիւնքը եղած է հայ շինուածքներ ճոխացնել կերտուածքի նոր ձևով մը, կլոր եկեղեցիներու դրութեամբ :

Արդարեւ՝ Զուարթնոցէն վերջն է որ

(19) Այս մասին տես Բազմալեւ 1942, թիւ 1-12 և 1943 թիւ 1-6, որ կը խօսիմ հայոց մէջ սիւնազարդ ծածկոցի (portique) դրութեան մասին :

(20) Հոս կրնանք մեր լուսամուտ-կաթողիկէն կոչել «Գմբէթ», որովհետեւ ան իր կեդրոնական դերով կը կատարէ շէնքին վրայ տանիքի դեր : Զուարթնոցի վրայ մեր կաթողիկէն զործածուած է որպէս ճառագայթածեւ գմբէթ, ինչ որ չէ պարագան մեր միւս շինութիւններուն վրայ. (տես Բազմալեւ 1946, թիւ 6-7 և 11-12) :



ՊԱՏ. 12. - Զուարթնոց եկեղեցի. վերակազմութիւն Թ. Թորմանեանի :


երեւան կու գան մեր ճարտարապետութեան մէջ կլոր եկեղեցիները : Անիի Ս. Գրիգորը (Թ. Գար) շինուած Գագիկ թա-գաւորէն, Անիի Ս. Փրկիչը, Անիի Հովութի եկեղեցին՝ որ տեսակ մը պատասխան է Գագիկի Ս. Գրիգորին⁽²¹⁾ : Այս շարքին մէջ կրնանք նաեւ մտցնել բազմանկիւն եկեղեցիները, որպիսին է օրինակ՝ Ապու-ղամարեանց եկեղեցին Անիի մէջ :

(21) Գոյութիւն ունեցող առասպելի մը համաձայն՝ Հովութի եկեղեցին շինուած է անոր համար որ զայն շինել առաջին կէտը, Գագիկի նորակառուց Ս. Գրիգորէն վտարուած էր, որովհետեւ այդ եկեղեցին թագաւորական

Սակայն, Զուարթնոցէն վերջ եկող մեր կլոր եկեղեցիներուն մէջ, նախնական տիպը տուող մտահոգութիւնները կորսուած են և մնացած է միայն կլոր ձևը, աւելի յիշեցնելով միջնադարեան արեւմտեան մկրտարանները : Ինչ որ սխալմունքի մատնած է բոլոր անոնք, որոնք Զուարթնոցը քննած են հարեանցի կերպով :

Բայց, սիւնազարդ ծածկոցի (porti-

և աւագանիի եկեղեցի մը համարուած էր : Այս դէպքէն առնուած, հարուստ խաչնարածք այդ վերաւորանքին է պատասխան, Անիի բերդերէն դուրս շինել տուած է «Հովութի» կոչուած եկեղեցին, աւելի ճիշդ մատուցել :



ՊԱՏ. 13. - Ամիր Ս. Փրկիչ եկեղեցին, հայկական կոթողիկոսական միջնադարյան նմուշ մը. - Նկեղեցին շրջապատող ծածկոցը վերցուած է և կամ առկի միջոց վերածուած է որմերուն փակած սրնաշարքի մը:

ques) հետքը կը տեսնենք օրինակ՝ Ամիր Ս. Փրկիչին վրայ, ուր portiques-ին սրնները եկած փակած են կը որմին վրայ կազմելով նորը որմազարդ մը:

Ներդաշնակութեան տեսակետով քննելով Զուարթնոցը՝ կը տեսնենք թէ ան կառուցուած է հայկական կղզոյթի համեմատ:

Զուարթնոցի յատակագիծին ներդաշ-

նակ գիծը այս մասին ոչ մէկ տարակոյս կը ձգէ: Աւերող շէնքը կը պարփակուի բառակուսիի մը մէջ: Այս բառակուսին՝ չորս հակայ մոյթերու կեղծանանքն ունի, որոնց մէջ կը բաժնուի ինը ուրիշ բառակուսիներու: Այս առանցքները կը բաժնեն մեծ բառակուսիին կողմերը, հայկական ներդաշնակութեան յայտարար ՎՃ-ի համեմատութեամբ:

Եթէ բազմաթիւ Զուարթնոցի ներդաշնակ գիծը արեւմտեան այս ձեւի շէնքերու ներդաշնակութեան յայտարարներուն հետ, պիտի տեսնենք թէ այս վերջին շէնքերուն մէջ ներդաշնակութիւնը Փ-ի համեմատութեան վրայ է (Սան Սթեֆանոյ Ռոմանուայ, Բանթէն) մինչդեռ վիստայի տաճարը կը ներդաշնակուի Պիլիպիոսեան հնգեակով (պատ. 2):

Զուարթնոցի ներկայացուցած այս տարբերութիւնը, ազդեցոյց մըն է որ ան իրապէս հայկական ոճի ծնունդ է:

Եւ անկիւն շատ բնական է, քանի որ բուն Զուարթնոցը խաչաձեւ եկեղեցին է և մենք տեսնենք նախորդ յօդուածով⁽²²⁾ որ խաչաձեւ եկեղեցիները կը ներդաշնակուին առաջնորդ բառակուսիով մը, որուն հայկական յայտարարը ՎՃ-ն է:

Այսպէս՝ Զուարթնոցը, հայ հարա-

(22) Բազմավեպ 1948, թիւ 1-2.

րապետութեան օտար իր տեսքով՝ մեզ կը ներկայանայ որպէս զուտ հայկական շէնք մը: Այս է որ մեզի իրաւունք կու տայ զայն նկատելու որպէս մեր հարաւորապետութեան զուտ զործայնիքն մին:

Զուարթնոցի քերական կառուցուածքի մասին խօսելը, զփախտարար զուրս կը մնայ մեր ծրագրէն, սակայն յարմար առիթով մը ատոր վրայ ալ պիտի խօսիմ, որովհետեւ այդ մասին ալ սխալ կարծիքներ գոյութիւն ունին:

(Շարունակելի)

Ջորտ. Ս. ձեւ. ԱՆԻՐՃԵԱՆ

անգամ զուլիցերական
հարաւորապետ ծրագրողներու
միութեան:

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԳՐՈՂ.

ԱԻԵՏԻՍ ՏԷՐՈՒՆԵԱՆ

Եթէ հարց տրուի թէ՛ վերջին տասնեակ մը տարուան ընթացքին, ո՞վ է Ամերիկայի մէջ ամէնէն շատ լսուած անունը, անվարան պիտի պատասխանէինք՝ Ճան Ռոյ Քարլսըն, որուն իսկական անունն է Ալեաթիա Տէրունեան:

Ամերիկայի հարիւր յիսուն միլիոն բնակչութեան միայն փոքրիկ մէկ կոտորակն է որ թերեւս չէ լսած հռչակաւոր հայ գրողին անունը ոտաթոյի վրայ, կամ թերթերու մէջ:

Անկիւն միակ հայն է, որուն անգլիերէն մէկ հրատարակութիւնը՝ քննարկովը, այս երկրին ամէնէն շատ տարածուած եւ ամէնէն շատ վիճարկուած գրքերէն մին դարձաւ, աւելի քան 900,000-ի անհաւատալի սպառում մը ունենալով եւ հեղինակին համար ազահովելով անհուն փառք եւ ահալին հարստութիւն:

Կարելի է ըսել՝ թէ Ալեաթիա Տէրունեան Ամերիկայի ամէնէն ժողովրդական ու նոյն ատեն ամէնէն սիրուած մարդերէն մին է,



Ալեաթիա Տէրունեան

որովհետեւ անոնք որ ժողովրդապետական, զեմոկրատիկ սկզբունքներուն կը հաւատան՝ իր բարեկամներն են, իսկ անոնք որ թշնամիներ են աղատութեան եւ եղբայրութեան սկզբունքներուն, թշնամիներն են նաեւ մեր հայազգի ծանօթ հեղինակին, որուն անունն ու համբաւին արժանանցները հասան մինչեւ եւրոպական ցամաքամասին ափերը:

Եւ Ալեաթիա Տէրունեանը ճանչալու պատահութիւն ունեցայ ապիւյթ մօտաւորապէս տասնեակնոց տարի առաջ, Նիւ Եորքի Ամերիկեան դատարաններէն մէկուն մէջ: Ամերիկահայոց Առաջնորդ Ղեւոնդ Նպս. Գուրեանի սպաննութեան յաջորդող օրերն էին: Յուշումնայորդ ու հետաքրքիր հանդիսականներու ներկայութեամբ խոնուած դատարանը կ'երթայի ամէն օր, դատավարութիւնը նկարագրելու համար Նիւ Եորքի մէջ հրատարակուող Բանուոր օրաթերթին համար, որուն խմբագրական կազմին անդամներէն մէկն էի, իսկ Ալեաթիա կը ներկայացնէր Արմէնիէն Միքոթ Սրէքաքոթը շաբաթաթերթը, որուն լրագրող ու կարող աշխատակիցներէն մին էր այն ատեն: